ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՔԱՋԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
N ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/05-01

ք. Քաջարան ,,28,, հոկտեմբեր 2018 թ.

Քաջարանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ռազմիկ Փարսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված <<Քաջարանի թիվ 1 մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի սննդի բլոկի և կաթսայատան կառուցում, սան.հանգույցների, հանդերձարանի և դահլիճի հիմնանորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 01 դեկտեմբերի 2018թ.:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքները կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 730 օր:

Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Էլեկտրոնային գնումներե բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի ,Օրենսդրությունե բաժնի ,Ֆինանսների նախարարի հրամաններե ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3 /երեք/ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **39 500 000 (երեսունինը միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, որից 6 583 333 (վեց միլիոն հինգ հարյուր ութսուներեք հազար երեք հարյուր երեսուներեք) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն**: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.1.2 Պայմանագրի 5.1 կետում նշված ընդհանուր գումարի 61%-ը Պատվիրատուն վճարում է սեփական միջոցների հաշվին,իսկ 39%-ը `պետության տրամադրած ֆինանսական հատկացումների հաշվին:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների

փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը :

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳՏ=ՄԳ/ՆԳxԾԳՏxԾ, որտեղ՝

ՄԳ-ն Պայմանագրի 5.1 կետում նշված գինն է.

ՆԳ-ն շինարարական ծրագրի նախահաշվային գինն է.

ԾԳՏ-ն նախահաշվով ըստ աշխատանքի առանձին տեսակների համար սահմանված միավոր գինն է.

Ծ-ն կատարողական ակտերով ներկայացված աշխատանքի ծավալն է.

ՎԳՏ - նախահաշվով սահմանված առանձին տեսակների աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:.

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի ,Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներե բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 /վեց/ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
hh 9003124671 04
հվhh 09426045

/ստորագրություն/
Կ.Տ.

Կապալառու

Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
ք. Կապան, Մ. Հարությունյան 1
<<Արդշինինվեսբանկ>> ՓԲԸ ,Կապան մ/ճ
Հ/Հ 2470800045720000
ՀՎՀՀ 09400653

Ռ. Փարսյան
Կ.Տ.

28 հունիսի

Հավելված թիվ 1
2018 թ. կնքված
ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/05-01 ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

	Աշխատանքի անվանումը	Չափման միավոր	Քանակը	Մեկ միավորի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)	ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
1	2	3	4	5	6
	Ընդհանուր շինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ				
1	Հիմքերի փորում 0,5 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով կողալիցքում III կարգի գրունտներում	1000 մ3	0,046	630,272	28,993
2	Հողի մշակումը 0,5 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորոև բարձում ինքնաթափ մեքենաներ III կարգի գրունտներում	1000 մ3	0,032	768,427	24,590
3	Ավելորդ գրունտի տեղափոխում 5կմ	տ	32	2,293	73,373
4	Գրունտի հետադարձ լիցք ձեռքով	մ3	14	1,415	19,806
	Ընդամենը				**146,761**
	Հիմքեր				
5	Խճի նախապատրաստական շերտի իրականացում	խմ	3,780	9,510	35,947
6	Բետոնյա նախապատրաստական շերտի իրականացում Բ 7,5 դասի բետոնով	խմ	3,780	41,169	155,618
7	Բուտաբետոնե ժապավենային հիմքերի կառուցում Բ 15 դասի բետոնով	մ3	14,24	47,016	669,512
8	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում	խմ	2,550	5,620	14,332
9	Միաձույլ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ 20 դասի բետոնով	մ3	8,962	87,861	787,414
10	Ամրան AIC Φ 6	տ	0,100	539,003	53,900
11	Ամրան A500C Φ 12	տ	0,233	528,241	123,080
12	Որմնախարիսխի երեսապատում բազալտե սալիկներով 30մմ հաստությամբ	մ2	5,63	18,885	106,322
	Ընդամենը				**1 946,126**
	Պատեր և ե/բ կոնստրուկցիաներ				
13	Արտաքին պատերի կառուցում ուղիղ կտրվածքի տուֆ քարերից 40 սմ հաստությամբ	խմ	31,120	24,918	775,447
14	Պատերի ամրանավորում	տն	0,180	613,850	110,493
15	Միաձույլ ե/բետոնե սյուների կառուցում Բ 20 դասի բետոնով	մ3	9,598	108,596	1 042,302
16	Ամրան A I Φ 8	տ	0,118	539,003	63,602
17	Ամրան A500C Φ 18	տ	0,094	526,089	49,242
18	Ամրան A500C Φ 20	տ	0,340	526,089	178,803
19	Միաձույլ ե/բետոնե հեծանների կառուցում Բ 20 դասի բետոնով	մ3	9,269	105,314	976,152
20	Ամրան A I Φ 8	տ	0,397	539,003	213,984
21	Ամրան A500C Φ 18	տ	0,170	526,089	89,646
22	Ամրան A500C Φ 20	տ	0,331	526,089	173,872
23	Ամրան A500C Φ 22	տ	0,449	526,089	236,214
24	Ամրան A500C Φ 25	տ	0,065	526,089	34,331
25	Միաձույլ ե/բետոնե բարավորների կառուցում Բ 20 դասի բետոնով	մ3	0,780	105,314	82,145
26	Ամրան A I Φ 8	տ	0,018	539,003	9,810
27	Ամրան A500C Φ 18	տ	0,050	526,089	26,515
28	Վրադիր էլեմենտների տեղադրում մինչև 20կգ քաշով ՄՎ-1 , ՄՎ-2	տն	0,259	100,241	25,962
29	Թիթեղ 10 մմ հաստ	տ	0,195	674,753	131,577
30	Ամրան A500C Φ 18	տն	0,064	526,089	33,670

31	Միջնորմների կառուցում 100մմ հաստությամբ (400x200x100)	ք.մ.	69,700	3,922	273,387
	Ընդամենը				**4 527,154**
	Տանիք				
32	Մետաղական ֆերմաների մոնտաժում Ֆ-1, Ֆ-2, Ֆ-3	տ	1,520	72,173	109,703
33	Խողովակ 100x50x4,0	մ	21,16	5,535	117,111
34	Խողովակ 80x40x3մմ	մ	171,37	3,228	553,265
35	Խողովակ 50x50x2,5մմ	մ	80,47	2,152	173,197
36	Մետաղական կավարամածի մոնտաժում 60x40x2,0 կտրվածքի խողովակներից	տ	1,170	94,834	110,956
37	Խողովակ 60x40x2,0	մ	272,30	1,691	460,489
38	Մետաղական մասերի յուղաներկում հակակոռոզիոն ներկով	քմ	121,450	1,612	195,816
39	Տանիքի ջերմամեկուսացում	խմ	11,680	28,264	330,125
40	Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով КП-18-0.60 մմ	100 քմ	1,1	570,738	627,812
41	Ջրհորդան ճոռերի կառուցում ցինկապատ թիթեղներից 0.60մմ	մ	22,25	12,570	279,684
42	Տանիքի գագաթագծի կառուցում ցինկապատ թիթեղից 0,60մմ հաստ.	քմ	6,48	6,875	44,547
43	Ջրհորդան ձագարների տեղադրում ցինկապատ թիթեղներից	հատ	6,0	3,731	22,389
44	Ջրհորդան խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղներից Φ140մմ	մ	19,8	3,690	73,055
	Ընդամենը				**3 098,149**
	Դռներ				
45	Արտաքին դռան բլոկների տեղադրում վերնափեղկով -2 հատ	քմ	4,84	46,153	223,382
46	Արտաքին դռան բլոկների վերնափեղկերի տեղադրում (պատուհանի բլոկ չբացվող) -2 հատ	քմ	1,27	20,131	25,566
47	Ներքին դռան բլոկի տեղադրում վերնափեղկով -1 հատ	քմ	2,86	28,989	82,908
48	Ներքին դռան բլոկի վերնափեղկերի տեղադրում (պատուհանի բլոկ չբացվող) -1 հատ	քմ	0,91	20,089	18,281
49	Ներքին դռան բլոկների տեղադրում -3 հատ	քմ	5,04	28,989	146,104
	Ընդամենը				**496,240**
	Պատուհաններ				
50	Պատուհանների տեղադրում (բացվող)	քմ	2,48	23,776	58,845
51	Նույնը չբացվող	քմ	5,81	20,089	116,615
52	Պատուհանների արտաքին պատուհանագոգերի տեղադրում բազալտե սալիկներով 25,0սմ լայնությամբ	քմ	1,3	14,841	18,551
	Ընդամենը				**194,012**
	Հատակներ				
53	Գրունտի տոփանում 20,0սմ հաստությամբ	100մ3	0,195	33,443	6,521
54	Տոփանվող գրունտի ջրում	100 քմ	0,977	1,035	1,011
55	Նախապատրաստական շերտի կառուցում խճից d=10սմ հաստությամբ	մ3	9,77	12,548	122,597
56	Բետոնե հատակի կառուցում B 15. դասի բետոնով 120 մմ հաստ	խմ	11,720	50,181	588,117
57	Ջերմամեկուսիչ շերտի կառուցում B 7.5 դասի թեթև բետոնով 50 մմ հաստ	խմ	4,887	34,185	167,045
58	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	97,730	1,530	149,491
59	Լամինատե հատակների կառուցում	ք.մ	46,63	6,520	304,020
60	Մետլախե հատակների կառուցում 40x40սմ	քմ	51,10	9,217	470,970
	Ընդամենը				**1 809,773**
	Ներքին հարդարման աշխատանքներ				
61	Պատերի սվաղում գաջե շաղախով	մ2	136,26	2,717	370,175
62	Դռների և պատուհանների շեպերի սվաղում գաջե շաղախով	մ2	6,84	6,578	44,996
63	Պատերի սվաղում ցեմենտավազե շաղախով	մ2	147,56	3,111	459,111
64	Պատերի երեսապատում հախճասալիկներով	քմ	45,81	8,502	389,495
65	Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	238,01	1,835	436,853

66	Կախովի առաստաղի կառուցում /PVC/	քմ	39,88	3,510	139,998
67	Կախովի առաստաղի կառուցում /Արմստրոնգ/	քմ	57,85	5,828	337,146
	Ընդամենը				**2 177,774**
	Արտաքին հարդարման աշխատանքներ				
68	Արտաքին պատերի սվաղում ցեմենտե շաղախով	քմ	111,30	2,768	308,071
69	Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում	ք.մ.	51,84	1,524	79,021
70	Դռների և պատուհանների շեպերի սվաղում ց/ա շաղախով	մ	34,2	0,750	25,638
	Ընդամենը				**412,730**
	Արտաքին հարթակներ				
71	Գրունտի տոփանում 20,0սմ հաստությամբ	100մ3	0,006	33,443	0,201
72	Տոփանվող գրունտի ջրում	100 քմ	0,03	1,035	0,031
73	Նախապատրաստական շերտի կառուցում խճից 20-40 մմ/ d=10սմ հաստությամբ	մ3	0,3	12,548	3,765
74	Բետոնե հատակի կառուցում B 15. դասի թեթև բետոնով 120 մմ հաստ	խմ	0,600	44,849	26,909
75	Հարթակի երեսապատում բազալտե սալիկներով 3,0սմ հաստությամբ	քմ	3,0	17,854	53,561
76	Կողային ճակատների երեսապատում բազալտե սալիկներով 3,0սմ հաստությամբ	քմ	0,98	19,344	18,957
	Ընդամենը				**103,424**
	Հիմնանորոգման աշխատանքներ				
	1,Քանդման աշխատանքներ				
77	Բացվածքների իրականացում 550 մմ հաստությամբ քարե պատերի մեջ	խմ	0,82	15,160	12,431
78	Պատուհանների և դռների շեպերի գաջե սվաղի քանդում	քմ	16,13	1,183	19,083
79	Պատուհանների բլոկների ապամոնտաժում (պատուհանագոգի տախտակով)	քմ	7,02	2,553	17,924
80	դռների ապամոնտաժում	քմ	9,45	1,496	14,138
81	Գաջե շաղախի շերտի քանդում պատերից	քմ	149,25	1,183	176,578
82	միջնորմների քանդում	քմ	8,73	1,042	9,099
83	Կերամիկական սալիկների քանդում պատերից /լվացարաններ և սան. հանգույցներ/	քմ	65,77	0,755	49,668
84	Ց/ավազային շաղախի շերտի քանդում պատերից	քմ	65,77	0,233	15,318
85	Մետլախե հատակների քանդում	քմ	27,48	0,546	14,999
86	Հատակի ց/ավազային հարթեցնող շերտի քանդում	քմ	27,48	0,460	12,654
87	Կերամիկական լվացարանների ապամոնտաժում	հատ	8	0,623	4,986
88	Զուգարանակոնքերի ապամոնտաժում	հատ	8	0,771	6,166
	Ընդամենը				**353,045**
	2.Դռներ և պատուհաններ				
89	Մետաղապլաստե պատուհանների բլոկների տեղադրում	քմ	2,34	26,942	63,044
90	Մետաղապլաստե դռան բլոկների տեղադրում	քմ	15,69	37,190	583,506
	Ընդամենը				**646,550**
	3.Պատեր և առաստաղներ				
91	Բացվածքների փակում քարե պատերի մեջ ուղիղ կտրվածքի քարով	խմ	1,17	18,842	22,046
92	Պատերի սվաղում ց/ավազային շաղախով	քմ	330,97	2,892	957,198
93	Պատերի արտաքին սվաղում ց/ավազային շաղախով	քմ	2,34	2,892	6,768
94	Միջնորմների կառուցում 100մմ հաստությամբ (400x200x100)	ք.մ.	12,76	3,922	50,049
95	Պատերի սվաղում գաջե շաղախով	մ2	66,51	1,397	92,884
96	Առաստաղի սվաղում գաջե շաղախով	ք.մ.	16,09	1,520	24,459
97	Պատուհանների և դռների շեպերի գաջե սվաղի իրականացում	քմ	5,260	5,648	29,707
98	Պատերի մածկում	100 քմ	0,759	21,696	16,457
99	Առաստաղների մածկում	100 քմ	0,16	28,728	4,622
100	Պատերի և առաստաղների սոսնձաներկում	100 քմ	0,879	139,491	122,557
101	Պատերի երեսապատում հախճասալիկներով	քմ	246,5	8,510	2 097,703
102	Կախովի առաստաղի կառուցում	քմ	59	3,510	207,119
	Ընդամենը				**3 631,567**
	4.Հատակներ				
94	Լամինատե մանրահատակի իրականացում	քմ	59,74	7,274	434,552

95	Ջրամեկուսիչ շերտի իրականացում սան. հանգույցներում և լվացարաններում	100 քմ	0,751	502,724	377,495
96	Ց/ավազային հարթեցնող շերտի իրականացում 30 մմ հաստությամբ	քմ	75,09	1,611	120,957
97	Մետլախե հատակի իրականացում	քմ	75,09	8,283	621,942
	Ընդամենը				**1 554,946**
	Ջրամատակարարում և ջրահեռացում				
98	Կոյուղու խողովակների փոխում /Φ110, 2 մմ/	գծմ	45,8	3,680	168,5376
99	Կոյուղու խողովակների փոխում /Φ50, 2,2 մմ/	գծմ	25,0	3,187	79,6760
100	Եռաբաշխիկ 110x110x110	մ	10,0	0,769	7,6869
101	Եռաբաշխիկ 110x110x50	մ	5,0	0,615	3,0747
102	Եռաբաշխիկ 110x50x50	մ	1,0	0,615	0,6149
103	Եռաբաշխիկ 50x50x50	մ	4,0	0,154	0,6149
104	Անկյուն 110x110	մ	3,0	0,615	1,8448
105	Անկյուն 50x50	մ	10,0	0,154	1,5374
106	Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Φ20մմ	մ	21,0	2,628	55,1978
107	Մետաղապլաստե խողովակների մոնտաժում Φ15մմ	մ	51,0	3,243	165,3781
108	Զուգարանակոնքերի տեղադրում	կոմպ	8,0	33,166	265,3294
109	Կերամիկական լվացարանների տեղադրում	կոմպ	8,0	18,254	146,0292
110	Լվացարանի տեղադրում /խոհանոցային երկտեղանոց/	կոմպ	2,0	22,724	45,4488
111	Ծորակի տեղադրում Φ15մմ	հատ	10,0	5,777	57,7745
112	Հոսակների տեղադրում	կոմպ.	4,00	2,492	9,9666
	Ընդամենը				**1 008,712**
	Ջերմամատակարարում				
113	Ալյումինե ջեռուցման մարտկոցների տեղադրում	էքմ	90,0	0,964	86,756
114	Մարտկոցների արժեքը	հատ	90,0	6,303	567,291
115	Պոլիպրոպիլենի խողովակների մոնտաժում Φ25	գծմ	30,0	0,922	27,673
116	Պոլիպրոպիլենի խողովակների մոնտաժում Φ20	գծմ	50,0	0,615	30,747
117	Կցորդիչ փական Φ25	հատ	2,0	2,921	5,842
118	Հակադարձ փական Φ25	հատ	1,0	2,614	2,614
119	Մարտկոցի փական վերևի Φ15	հատ	15,0	2,614	39,203
120	Մարտկոցի փական ներքևի Φ15	հատ	15,0	2,460	36,897
121	Համակարգի փորձարկում	գծմ	80,0	0,101	8,072
	Ընդամենը				**805,094**
	Օդափոխություն				
122	Խողովակների տեղադրում /Φ160, 3 մմ/	գծմ	15,97	4,463	71,275
123	Խողովակների տեղադրում /Φ110, 2,5մմ/	գծմ	23,93	3,570	85,426
124	Եռաբաշխիկ 160 160 110	հատ	9,0	3,382	30,440
125	Եռաբաշխիկ 160 110 110	հատ	2,0	3,382	6,764
126	Անկյուն 110 110	հատ	14,0	0,615	8,609
127	Ցանց	հատ	14,0	0,615	8,609
	Ընդամենը				**211,124**
	Էլեկտրամատակարարում				
128	Ակոսների փորում /20*40մմ/ պատերի մեջ էլ. լարերի անցկացման համար	գծմ	239,00	0,402	96,067
129	Ավտոմատ անջատիչների մոնտաժում	հատ	4,00	1,661	6,642
130	1 ստեղնավոր անջատիչների մոնտաժում	հատ	16,00	1,507	24,109
131	Վարդակների մոնտաժում	հատ	10,00	1,250	12,497
132	Լյումինիսցենտային լուսարձակների մոնտաժում	հատ	14	5,822	81,514
133	լուսարձակների մոնտաժում	հատ	19	5,976	113,547
134	էլեկտրոմոնտաժային տուփերի մոնտաժում	հատ	1,00	1,083	1,083
135	էլ. հաղորդալարերի անցկացում ՊՊՎ-2x2.5 քմմ	100մ	2,00	47,466	94,932
136	էլ. հաղորդալարերի անցկացում ՊՊՎԳ-2x4 քմմ	100մ	0,25	78,214	19,553
137	էլ. հաղորդալարերի անցկացում ՊՊՎԳ-2x6 քմմ	100մ	0,14	93,587	13,102
138	Ակոսների փակում գաջի սվաղով	քմ	9,56	4,027	38,500
	Ընդամենը				**501,546**
	Կաթսայատուն				
	Հողային աշխատանքներ				
139	Հիմքերի փորում 0,5 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով կողալիցքում III կարգի գրունտներում	1000 մ3	0,012	630,272	7,859
140	Հողի մշակումը 0,5 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորոև բարձում ինքնաթափ մեքենաներ III կարգի գրունտներում	1000 մ3	0,007	768,427	5,556

141	Ավելորդ գրունտի տեղափոխում 1կմ	տ	10,840	1,235	13,384
142	Գրունտի հետադարձ լիցք ձեռքով	մ3	5,240	1,415	7,413
	Ընդամենը				**34,212**
	Հիմքեր				
143	Խճի նախապատրաստական շերտի իրականացում	խմ	1,130	15,085	17,046
144	Բետոնյա նախապատրաստական շերտի իրականացում Բ 7,5 դասի բետոնով	խմ	1,130	41,169	46,521
145	Բուտաբետոնե ժապավենային հիմքերի կառուցում Բ 15 դասի բետոնով	մ3	4,970	47,016	233,671
146	Միաձույլ ե/բ հիմնային հեծանների կառուցում Բ 15 դասի բետոնով	մ3	1,332	84,585	112,667
147	Ամրան AIC Φ 6	տ	0,020	539,003	10,564
148	Ամրան A500C Φ 12	տ	0,062	528,241	32,719
	Ընդամենը				**453,188**
	Պատեր և ե/բ կոնստրուկցիաներ				
149	Արտաքին պատերի կառուցում ուղիղ կտրվածքի տուֆ քարերից 40 սմ հաստությամբ	խմ	9,300	24,918	231,737
150	Պատերի ամրանավորում	տն	0,035	613,850	21,387
151	Միաձույլ ե/բետոնե սյուների կառուցում Բ 15 դասի բետոնով	մ3	1,780	105,319	187,468
152	Ամրան A I Φ 6	տ	0,0175	539,003	9,438
153	Ամրան A500C Φ 16	տ	0,0948	526,089	49,873
154	Միաձույլ ե/բետոնե հակասեյսմիկ գոտիների կառուցում Բ 15 դասի բետոնով	մ3	9,269	102,037	945,778
155	Ամրան A I Φ 6	տ	0,0201	539,003	10,827
156	Ամրան A500C Φ 16	տ	0,1087	526,089	57,188
157	Վրադիր էլեմենտների տեղադրում մինչև 20կգ քաշով ՄՎ-1 , ՄՎ-2	տն	0,044	100,241	4,411
158	Թիթեղ 10 մմ հաստ	տ	0,025	674,753	16,950
159	Ամրան A500C Φ 18	տն	0,019	526,089	9,933
	Ընդամենը				**1 544,989**
	Տանիք				
160	Մետաղական ֆերմերների մոնտաժում Ֆ-1	տ	0,224	72,173	16,167
161	Խողովակ 80x40 /3 մմ/	մ	30,96	3,228	99,954
162	Խողովակ 50x50 /2,5 մմ/	մ	10,67	2,152	22,965
163	Մետաղական կավարամածի մոնտաժում 60x40x2,0 կտրվածքի խողովակներից	տ	0,285	94,834	27,028
164	Խողովակ 50x30 /2 մմ/	մ	84,80	1,537	130,369
165	Մետաղական մասերի յուղաներկում հակակոռոզիոն ներկով	քմ	23,750	1,612	38,292
166	Տանիքի ջերմամեկուսացում	խմ	2,320	28,264	65,573
167	Տանիքի ծածկույթի կառուցում պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով КП-18-0.60 մմ	100 քմ	0,232	570,738	132,411
168	Ջրհորդան ճոռերի կառուցում ցինկապատ թիթեղներից 0.60մմ	մ	10,6	12,570	133,243
169	Տանիքի գագաթագծի կառուցում ցինկապատ թիթեղից 0,60մմ հաստ.	քմ	2,12	6,875	14,574
170	Ջրհորդան ձագարների տեղադրում ցինկապատ թիթեղներից	հատ	2,0	3,731	7,463
171	Ջրհորդան խողովակների տեղադրում ցինկապատ թիթեղներից Φ140մմ	մ	5,4	3,690	19,924
	Ընդամենը				**707,963**
	Դռներ				
172	Արտաքին դռան բլոկների տեղադրում վերնափեղկով	քմ	2,40	46,153	110,768
	Ընդամենը				**110,768**
	Պատուհաններ				
173	Պատուհանների տեղադրում (բացվող)	քմ	2,60	23,776	61,817
	Ընդամենը				**61,817**
	Հատակներ				
174	Գրունտի տոփանում 20,0սմ հաստությամբ	100մ3	0,0542	33,443	1,813
175	Տոփանվող գրունտի ջրում	100 քմ	0,2712	1,035	0,281
176	Նախապատրաստական շերտի կառուցում խճից d=10սմ հաստությամբ	մ3	2,712	15,085	40,911

177	Բետոնե հատակի կառուցում B 15. դասի բետոնով 120 մմ հաստ	խմ	3,250	50,181	163,087
178	Հարթեցնող շերտի կառուցում 30մմ հաստությամբ	քմ	27,120	1,530	41,484
179	Մետլախե հատակների կառուցում 40x40սմ	քմ	13,50	7,492	101,138
	Ընդամենը				**348,712**
	Ներքին հարդարման աշխատանքներ				
180	Դռների և պատուհանների շեպերի սվաղում ց/ա շաղախով	մ	11,3	0,750	8,471
181	Պատերի սվաղում ցեմենտավազե շաղախով	մ2	35,50	3,111	110,453
182	Պատերի երեսապատում հախճապակիներով	քմ	20,20	8,192	165,475
183	Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում լատեքս ներկով	քմ	15,3	1,835	28,082
184	Կախովի առաստաղի կառուցում /PVC/	քմ	13,50	3,510	47,392
	Ընդամենը				**359,873**
	Արտաքին հարդարման աշխատանքներ				
185	Արտաքին պատերի սվաղում ցեմենտե շաղախով	քմ	41,98	2,768	116,198
186	Պատերի ծեփամածկում և սոսնձաներկում	ք.մ.	43,22	1,524	65,881
187	Դռների և պատուհանների շեպերի սվաղում ց/ա շաղախով	մ	11,3	0,750	8,471
	Ընդամենը				**190,550**
	Բարեկարգման և հարդարման աշխատանքներ				
	Հողային և քանդման աշխատանքներ				
188	Բետոնյա սալիկներից հատակի քանդում	քմ	245	0,494	121,117
189	Հողի և շին. Աղբի մշակումը 0,5 խմ շերեփի տարողությամբ էքսկավատորով բարձում ինքնաթափ մեքենաներ III կարգի գրունտներում	1000 մ3	0,05613	768,427	43,132
190	Ավելորդ գրունտի տեղափոխում 5կմ	տ	89	2,293	204,069
	Ընդամենը				**368,317**
	Հատակներ				
191	Բետոնե եզրաքարի տեղադրում բետոնի հիմքով 100x250 հատվածքով	մ	148,82	5,626	837,289
192	Խճի նախապատրաստական շերտի իրականացում	խմ	17,542	15,085	264,621
193	Ավազի նախապատրաստական շերտի իրականացում	խմ	17,542	5,620	98,591
194	Բետոնային սալերով մայթերի կառուցում /6 սմ հաստությամբ/	քմ	350,84	7,292	2 558,303
	Ընդամենը				**3 758,804**
	Արտաքին հարդարման աշխատանքներ				
195	Տախտակամածի կառուցում և քանդում արտաքին պատերի հարդարման աշխատանքների կատարման համար	100 քմ	5,41	97,613	528,084
196	Արտաքին պատերի ծեփամածկում և սոսնձաներկում	ք.մ.	541,00	1,524	824,659
	Ընդամենը				**1 352,744**
	Ամբողջը				**32 916,667**
	ԱԱՀ	20%			6583,333
	Ընդհանուրը				**39 500,00**

Գումարը տառերով` երեսունինը միլիոն հինգ հարյուր հազար ՀՀ դրամ

Կապալառուն աշխատանքները կատարում է ք.Քաջարան,Աբովյան 8 հասցեում

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312467104
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
ք. Կապան, Մ. Հարությունյան 1
<<Արդշինինվեստբանկ>> ՓԲԸ ,Կապան մ/ճ
Հ/Հ 2470800045720000
ՀՎՀՀ 09400653

---------------------- Ռ. Փարսյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված թիվ 2
28 հունիսի 2018 թ. կնքված
ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/05-01 ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
	Ընդհանուր շինարարական աշխատանքներ		
1	Հողային աշխատանքներ	պայմանագրի կնքման օրվանից սկսած	10 օր
2	Հիմքերի կառուցում	11-րդ օրվանից	10 օր
3	Պատերի և ե/բետոնյա կոնստրուկցիաների կառուցում	21-րդ օրվանից	30 օր
4	Տանիքի կառուցում	51-րդ օրվանից	15 օր
5	Դռների և պատուհանների տեղադրում	66-րդ օրվանից	5 օր
6	Հատակների և արտաքին հարթակների կառուցում	71-րդ օրվանից	10 օր
7	Ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում	81-րդ օրվանից	30 օր
	Հիմնանորոգման աշխատանքներ		
8	Քանդման աշխատանքներ	11-րդ օրվանից	10 օր
9	Պատեր և առաստաղներ	21-րդ օրվանից	30 օր
10	Հատակներ	51-րդ օրվանից	15 օր
11	Դռների և պատուհանների տեղադրում	66-րդ օրվանից	3 օր
	Մոնտաժային աշխատանքներ		
12	**Ջրամատակարարում և ջրահեռացում**	111-րդ օրվանից	4 օր
13	**Ջերմամատակարարում**	115-րդ օրվանից	4 օր
14	**Օդափոխություն**	119-րդ օրվանից	4 օր
15	**Էլեկտրամատակարարում**	123-րդ օրվանից	4 օր

	Կաթսայատուն		
16	Հողային աշխատանքներ	պայմանագրի կնքման օրվանից սկսած	10 օր
17	Հիմքերի կառուցում	11-րդ օրվանից	10 օր
18	Պատերի և ե/բետոնյա կոնստրուկցիաների կառուցում	21-րդ օրվանից	30 օր
19	Տանիքի կառուցում	51-րդ օրվանից	15 օր
20	Դռների և պատուհանների տեղադրում	66-րդ օրվանից	5 օր
21	Հատակների և արտաքին հարթակների կառուցում	71-րդ օրվանից	10 օր
22	Ներքին և արտաքին հարդարման աշխատանքների իրականացում	81-րդ օրվանից	30 օր
	Բարեկարգման և հարդարման աշխատանքներ		
23	Հողային և քանդման աշխատանքներ	123-րդ օրվանից	5 օր
24	Հատակներ	128-րդ օրվանից	10 օր
25	Արտաքին հարդարման աշխատանքների իրականացում	138-րդ օրվանից	12 օր
ԸՆԴԱՄԵՆԸ		**պայմանագրի կնքման օր**	**150 օր**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312467104
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու

Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
ք. Կապան, Մ. Հարությյան 1
<<Արդշինինվեսբանկ>> ՓԲԸ ,Կապան մ/ճ
Հ/Հ 2470800045720000
ՀՎՀՀ 09400653

Ռ. Փարսյան
Կ.Տ.

Հավելված N 3
28 հունվարի 2018 թ. կնքված
ՍՄՔՀ-ԳՀԱՇՁԲ-18/05-01 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

հազ.ՀՀ դրամ

Աշխատանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում		
			3-րդ եռ.	4-րդ եռ.	Ընդամենը տարի
1.	45000000	,Քաջարանի թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի սննդի բլոկի և կաթսայատան կառուցում,սան.հանգույցների,հանդերձարանի և դահլիճի հիմնանորոգում	19 750,0	39 500,0	39 500,0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Քաջարանի համայնքապետարան
ք.Քաջարան,Լեռնագործների 4
ՀՀ ՖՆ գործառն.վարչ.
հհ 900312467104
հվհհ 09426045

/ստորագրություն/
Կ.Տ

Կապալառու

Կապանի <<Նորոգշին>> ՍՊԸ
ք. Կապան, Մ. Հարությունյան 1
<<Արդշինինվեսբանկ>> ՓԲԸ ,Կապան մ/ճ
Հ/Հ 2470800045720000
ՀՎՀՀ 09400653

Ռ. Փարսյան
Կ.Տ.